Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-176[2]-22.03.2018-ՊԻՄԻ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՕՐԵՆՔԸ
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Չեղյալ ճանաչել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հունվարի 17-ի ՀՕ-42-Ն օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի
(Կ-176-03.11.2017,06.03.2018-ՊԻՄԻ-017/1) վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 3	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «կարող են մասնակցել» փոխարինել «մասնակցեկու իրավունք ունեն» բառերով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**
2.	**ՀՀ կառավարություն**	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 4, մաս 1-ին	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հանրաքվեի դրվող նոր հարցով, մասնավորապես սահմանել, որ հանրաքվեի է դրվում հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, դրա հետ կապված նաև առաջարկվում է նախագծից հանել 4-րդ հոդվածի 3-րդ մասը:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**
3.	**ՀՀ կառավարություն**	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 5, մաս 1-ին	Առաջարկվում է նախագծից հանել 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

4.	ՀՀ կառավարություն	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 10, մաս 1-ին	Առաջարկվում է սահմանել, որ օրենքի նախագծի ընդունումը համարվում է մերժված նաև Ազգային ժողովի հերթական նստաշրջանի ընթացքում, իսկ եթե նախագիծը ներկայացվել է հերթական նստաշրջանի վերջին երկու ամսվա ընթացքում, ապա ոչ ուշ քան հաջորդ հերթական նստաշրջանի առաջին երկու ամսվա ընթացքում չընդունվելու դեպքում:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
5.	ՀՀ կառավարություն	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 10, մաս 2-րդ	Առաջարկվում է սահմանել, որ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը կարող է հանրաքվեի դրվել այդ նախաձեռնությանը 350.000 ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների միանալու դեպքում՝ առանց նախագիծը Ազգային ժողով ներկայացնելու:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
6.	ՀՀ կառավարություն	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 10, մաս 3-րդ	Առաջարկվում է սահմանել, որ Հանրապետության նախագահի կողմից սահմանված ժամկետում հանրաքվե չնշանակելու դեպքում հանրաքվեն նշանակված է համարվում սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 65-րդ օրվան նախորդող կիրակի օրը:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
7.	ՀՀ կառավարություն	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ,	Առաջարկվում է սահմանել, որ նախաձեռնող խումբ ձևավորվում է ինչպես Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու, այնպես էլ	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

		հոդված 13, մաս 1-ին	հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու համար:		
8.	**ՀՀ կառավարություն**	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 13, մաս 12-րդ	Առաջարկվում է նախագծից հանել դրույթը, որի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարող է սահմանել ստորագրությունների հավաքագրումը միայն էլեկտրոնային եղանակով իրականացնելու կարգ:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
9.	**ՀՀ կառավարություն**	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 13, մաս 19-րդ	Առաջարկվում է հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը հանրաքվեի դնելու համար սահմանել ստորագրությունների հավաքագրման 90-օրյա ժամկետ՝ նախաձեռնող խմբի գրանցումից հետո:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
10	**ՀՀ կառավարություն**	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 15, մաս 2-րդ	Առաջարկվում է նախատեսել տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգ, որի դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմավորվում է «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերի և տարածքային ընտրական հանձնաժողովի առաջարկած թեկնածուներից:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
11	**ՀՀ կառավարություն**	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ,	Առաջարկվում է դիտորդատական առաքելություն իրականացնող Հայաստանի Հանրապետության հասարակական	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

		հոդված 21, մաս 1-ին	կազմակերպությունների կանոնադրական նպատակներին ներկայացվող մեկ տարվա ժամկետը կրճատել՝ սահմանելով 6-ամսյա ժամկետ:		
	ՀՀ կառավարություն	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ	Առաջարակվում է «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի հետ քննարկել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը չեղյալ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծը: 2018 թվականի հունվարի 17-ին ընդունվել է «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-42-Ն սահմանադրական օրենքը (այսուհետ՝ Օրենք), որը ուժի մեջ է մտնելու նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը: Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է գործի քննությունը մերժելու	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			բողոքարկում. գործի քննությունը մերժելու մասին Սահմանադրական դատարանի որոշումը բողոքարկվում է Սահմանադրական դատարան, իսկ վերջնական որոշումն ընդունվում է Սահմանադրական դատարանի երեք դատավորի կազմով: Նման կարգավորման առկայությունը նպատակահարմար չէ և հակասում է գործերի քննության ընդհանուր տրամաբանությանը:		
12.	**ՀՀ Ազգային ժողովի «ԵԼՔ» խմբակցություն**	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 5	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-կետի՝ հանրաքվեի չեն կարող դրվել՝ այն օրենքների նախագծերը, որոնք վերաբերում են սահմանադրական օրենքների իրավակարգավորման առարկային, պետական բյուջեին, հարկերին, տուրքերին, այլ պարտադիր վճարներին, համաներմանը, (…) միջազգային պայմանագրերին, վարչատարածքային բաժանմանը, միջհամայնքային միավորումներ ստեղծելուն, նախարարարությունների ցանկին և Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգին: Նախևառաջ պարզ չէ, թե ինչու է առաջարկվում այդպես սահմանել. կարծում ենք, որ նման խնդիրները ոչ թե կարող են, այլ	Չի ընդունվել: Սահմանադրության 204-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հանրաքվեի չեն կարող դրվել այն օրենքների նախագծերը, որոնք վերաբերում են սահմանադրական օրենքների իրավակարգավորման առարկային, պետական բյուջեին, հարկերին, տուրքերին, այլ պարտադիր վճարներին, համաներմանը, պետության պաշտպանությանը և	**Չի ընդունվել:**

			նաև հաճախ պետք է համաժողովրդական քվեարկության առարկա լինեն, ըստ այդմ առաջարկում ենք նշված մասը հանել նախագծից: Մյուս կողմից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 205-րդ հոդվածի 1-ին մասի՝ վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են հանրաքվեների միջոցով, իսկ նման հարցը կարող է լուծվել միջազգային պայմանագիրը վավերացնելով կամ դրան միանալով, ըստ այդմ՝ միջազգային պայմանագրերի մասով առաջարկվող դրույթը հակասում է Սահմանադրությանը: Այսպիսով՝ առաջարկում ենք վերանայել հոդվածի խնդրո առարկա մասերը՝ հանելով նշված սահմանափակումները:	անվտանգությանը, միջազգային պայմանագրերին, ինչպես նաև Հանրաքվեի մասին օրենքով սահմանված այլ հարցերի, հետևաբար նշված դրույթը բխում է Սահմանադրությունից:	